ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 102

ք. Երևան 07.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ--ի /ՀՎՀՀ՝ 28112687, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Հաղթանակ 10 փ. տ. 14/, հետ 15. 05. 2023թ.. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-23-1/1-13 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ն պարտավոր էր 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 30.09.2023թ., մատակարարել 50 հատ օպտիկամանրաթելային փոխարկիչ:

Քանի որ վերոնշյալ ապրանքները մինչև 26.12.2023թ.-ը չեն մատակարարվել (ընդհանրապես չեն մատակարարվել), ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. հունվարի 29-ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ն Պայմանագիրը լուծելուց հետո, չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովման գումարների վճարվման կտրոնների բնօրինակները, ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ